ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 77 - 78 (16574) ՇԱԲԱԹ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ՀԱՍՏԱՏՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ՝ 117 ԿՈՂՄ ԵՎ 2 ԴԵՄ ՁԱՅՆՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ



Սեպտեմբերի 26-ին, Վրաստանի խորհրդարանը, երրորդ ընթերցմամբ, հաստատեց Վրաստանի Սահմանադրության փոփոխությունները: Օրենսդիր մարմինը երկրի Սահմանադրության նոր նախագիծն ընդունեց 117 կողմ եւ 2 դեմ ձայներով:

Միաժամանակ, խորհրդարանը՝ 114 կողմ եւ 3 դեմ ձայներով ընդունեց նաեւ Աջարիայի Ինքնավար Հանրապետության վերաբերյալ սահմանադրական օրենքի փոփոխությունները:

Սահմանադրության մեջ իրականացված փոփոխություններով, որոնք ուժի կմտնեն 2018 թվականի նախագահական ընտրություններից հետո, երկիրն անցնում է դասական խորհրդարանական կառավարման մոդելի:

Սահմանադրական փոփոխությունների հանգուցային հարցերից մեկը՝ ընտրական խառը հա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԱՅՍ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՄՇԱԿՎԵԼ Է ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ»

Սեպտեմբերի 26-ին, Վրաստանի կառավարության հերթական նիստում, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրակաշվիլին անդրադառնալով այդ օրը երկրի խորհրդարանում սահմանադրական փոփոխություններին եւ երրորդ ընթերցմամբ քննարկման թեմային, նշեց, որ ընկերությունը ձգտում է ներկայացնել այնպես, իբր Սահմանադրությունը մի կուսակցության փաստաթուղթ է, սակայն չի համապատասխանում իրականությանը:

- Այսօր կարեւոր օր է, խորհրդարանը երրորդ ընթերցմամբ կքննարկի երկրի համար կարեւորագույն փաստաթուղթը՝ Վրաստանի Սահմանադրությունը եւ ցանկանում եմ ասել, որ այս փաստաթուղթը մշակվել է համընդհանուր ան-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՄԵՆՔ ԴՐԵՑԻՆՔ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՔԸ, ՈՐԸ ԿԴԻՄԱԴՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՆ ՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ»

Վրաստանի խորհրդարանի կողմից Սահմանադրության նոր նախագծի հաստատումից հետո, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, վստահությամբ կարող ենք ասել, որ մենք դրեցինք պետական համակարգի հիմքը, որը կդիմադրի ժամանակներին ու տասնամյակներին:

Նրա խոսքով, այսօր խորհրդարանն ընդունեց Սահմանադրություն, որը կողմնորոշված է երկրի երկարաժամկետ զարգացմանը: «Այսօր խորհրդարանն ընդունեց պատմական որոշում: Երրորդ ընթերցմամբ քվեարկեցինք սահմանադրական փոփոխությունները: Այս փաստաթղթի հիման վրա ձեւավորվում է կատարյալ Սահմանադրությունը: Կարող ենք վստահությամբ ասել, որ մենք դրեցինք պետական համակարգի հիմքը, որը կդիմադրի ժամանակներին ու տասնամյակներին, եւ այդ ամենը կապահովի մեր երկրի երկարաժամկետ, ժողովրդավարական զարգացումը: Սա փաստաթուղթ է, որը խարսխված է իշխանության բաշխման, ժողովրդավարության, իրավական պետության, սոցիալական պետության սկզբունքների վրա, եւ դա այն միտվածությունն է, որով ներթափանցված է դրա յուրաքանչյուր հոդվածը»,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐՉԱՊԵՏՆ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 28-ին, Վրաստանի վարչապետ, «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Գիորգի Կվիրիկաշվիլին Ախալցիխեում ներկայացրեց Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի վեց քաղաքների՝ քաղաքապետի պաշտոնում կուսակցությունից առաջադրված թեկնածուներին:

- Ուրախ եմ, որ ձեզ հետ միասին գտնվում եմ այս պատմական, հինավուրց հողի վրա: Մենք կանգնած ենք միասին՝ վրացիները, մեր հայ քույր-եղբայրները եւ միասին կառուցում մեր երկրի առավել լավ ապագան: Բարեկամներ, «Վրացական երազանքի» իշխանության գլուխ գալու օրվանից, նշանակալի քայլեր կատարվեցին, որպեսզի մեր

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 25-26-ին, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանի ղեկավարած խորհրդարանական պատվիրակությունը, որի կազմում էին Ազգային ժողովի պատգամավորներ Արմեն Աշոտյանը, Արմեն Ռուստամյանը, Վարդեւան Գրիգորյանը, Լենա Նազարյանը, ինչպես նաեւ Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Շավարշ Քոչարյանը, պաշտոնական այցով գտնվում էր Վրաստանում:

Այցի շրջանակներում՝ Հայաստանի օրենսդիր մարմնի ղեկավարը հանդիպումներ ունեցավ Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի, նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի, արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեի հետ: Հայաստանի ԱԺ նախագահը Թբիլիսիի «Հովհ.Թումանյանի տուն» մշակութային կենտրոնում հանդիպում ունեցավ նաեւ վիրահայ համայնքի ներկայացուցիչների հետ:

«ՄԵՐ ՄԻՋԵՎ ՉԼՈՒԾՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ ՉԿԱՆ»

Հանդիպմանը Վրաստանի խորհրդարանի նախագահը, խոսելով վրաց-հայկական հարաբերությունների մասին, մասնավորապես, նկատեց՝ թեեւ այս տարի նշվում է երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների 25-ամյակը, սակայն վրաց-հայկական

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

24 ՏԱՐԻ՝ ՍՈՒԽՈՒՄԻԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Ընթացիկ տարվա սեպտեմբերի 27-ին լրացավ Սուխումիի անկման 24-րդ տարելիցը:

Աբխազիայում 13 ամիս եւ 13 օր տեւած ռազմական դիմակայության արդյունքում, Վրաստանը կորցրեց այդ տարածաշրջանի նկատմամբ իր իրավասությունը, որը իրեն հռչակեց «Անկախ հանրապետություն»: Ավելի ուշ, միջազգային հանրությունն ընդունեց այն փաստը, որ Ռուսաստանը բռնազավթել է Վրաստանի այդ տարածքը:

Չճշտված տվյալներով, այդ ռազմական հակամարտության ժամանակ զոհվել է ավելի քան 10 հազար վրացի զինծառայող եւ խաղաղ բնակիչ, ավելի քան 200 հազար մարդ դարձել փախստական: Աբխազական կողմից, իրենց իսկ տվյալներով, զոհվել է 3500 եւ վիրավորվել 2 հազար մարդ: 1993 թվականի սեպտեմբերի 27-ին աբխազ գրոհայինները գերեցին, ապա գնդակահարեցին Աբխազիայի Ինքնավար Հանրապետության նախարարների խորհրդի նախագահ Ժիուլի Շարտավային:

Սեպտեմբերի 27-ին, Սուխումիի անկման 24-րդ տարելիցի առթիվ, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ, Թբիլիսիում, հայրենիքի անկախության եւ տարածքային ամբողջականության համար զոհվածների հուշահամալիրում, հարգանքի տուրք մատուցեցին աբխազական հակամարտության ժամանակ զոհված հերոսների հիշատակին:

Այդ օրը Վրաստանի նախագահ Գիորգի Մարգելաշվիլին հետմահու ազգային հերոսի կոչում շնորհեց Գուրամ Գաբեսկերիային, ում 1993 թվականի սեպտեմբերի 27-ին գնդակահարեցին Ժիուլի Շարտավայի ու եւս 27 վրացիների հետ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ՀԱՍՏԱՏՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մակարգից համամասնական ընտրահամակարգին անցումն էր, թեպետ համամասնական ընտրահամակարգը կգործարկվի 2024 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո, իսկ առաջիկա, 2020 թվականի ընտրությունները կրկին կանցկացվեն խառն ընտրահամակարգով, եւ սակայն, այդ ընտրությունների համար միանշանակ կգործարկվի ընտրական 3 տոկոսանոց արգելագիծը:

Սահմանադրության նոր խմբագրությամբ նախագահը կընտրվի անուղղակի ընտրակարգով: Միաժամանակ, 2018 թվականի նախագահական ընտրությունները կանցկացվեն անմիջական կարգով, եւ ընտրողներն այդ ընտրություններում նախագահին կընտրեն վեց տարի ժամկետով:

Նշենք, որ խորհրդարանի կողմից, երրորդ ընթերցմամբ, սահմանադրական փոփոխությունների քննարկումն անցկացվեց սուր բանավեճերի պայմաններում: Մասնավորապես, ներկայացված փոփոխությունների քննադատությամբ հանդես եկան «Եվրոպական Վրաստան», «Ազգային միասնական շարժում» խորհրդարանական խմբակցությունների անդամները, որոնք, ի նշան բողոքի, հեռացան խորհրդարանի դահլիճից:

Սահմանադրական փոփոխությունների քննադատությամբ հանդես եկան նաեւ «Հայրենասերների ալյանսից» Վրաստանի խորհրդարանի անդամները:

Այդ օրը խորհրդարանական եւ ոչ խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչները Քութայիսիում, Վրաստանի խորհրդարանի շենքի մոտ. «ոչ միակուսակցական սահմանադրությանը» կարգախոսով անցկացրին բողոքի հանրահավաք:

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԱՅՍ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՄՇԱԿՎԵԼ Է ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նախընթաց քննարկման եւ ներգրավման արդյունքում: Ցավոք, ընդդիմությունը փորձում է ներկայացնել այնպես, իբր Սահմանադրությունը հանդիսանում է մի կուսակցության փաստաթուղթ, սակայն դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ դրա քննարկմանը ներգրավվել էին փորձագետներ, կուսակցություններ, ոչ կառավարական կազմակերպություններ: Նման գործընթացն ինքնին աննախադեպ էր: Մենք կարող ենք հպարտանալ այդ փաստաթղթով,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐՉԱՊԵՏՆ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կյանքը աստիճանաբար բարելավվեր եւ ժողովուրդն անմիջականորեն զգար բարեկեցությունը: Դա մեր առաջնային նպատակն է»,- հայտարարեց վարչապետը:

Գիորգի Կվիրիկաշվիլին խոսեց վերջին հինգ տարիների ընթացքում երկրամասում իրականացված նախագծերը, առանձնակի շեշտեց առաջիկայում իրականացվելիք նախագծերը, հայտարարելով, որ կենտրոնական իշխանությունը հնարավոր ամեն ինչ կանի երկրամասի բնակչության առջեւ ծառացած հիմնախնդիրների կարգավորման համար: Եվ որպես ասածի հաստատում, վարչապետը տեղացիներին ներկայացրեց «Վրացական երազանքի» կողմից Սամցխե-Ջավախեթիի քաղաքներում քաղաքապետի պաշտոնի թեկնածուներին: Մասնավորապես, վարչապետի խոսքով, կուսակցությունը Բորժոմիի քաղաքապետի թեկնածու է առաջադրում Լեւան Լիպարտելիանու, Ախալցիխեում՝ Զազա Մելիքիձեի, Ադիգենիում՝ Զաքարիա Էնդելաձեի, Ասպինձայում՝ Ռոստոմ Մագրաքվելիձեի, Ախալքալաքիում՝ Յուրիկ Ունանյանի, Նինոծմինդայում՝ Անիվարդ Մոսոյանի թեկնածությունները:

ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆ. «ՄԵՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԻՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Երեկ՝ սեպտեմբերի 29-ին, Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը, իշխող «Վրացական երազանք» կուսակցությունից, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլիից իրեն վերապահված լիազորություններից ելնելով, Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում ներկայացրեց «Վրացական երազանք» կուսակցությունից տեղական ինքնակառավարման ընտրությունների համար առաջադրվող թեկնածուներին, ընդգծելով, որ նրանք ներկայացնում են նախընտրական խոստումները կատարող կուսակցություն:

Նինոծմինդայում ներկայացրին թեկնածուներին

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

Իր խոսքում խորհրդարանի պատգամավորը նշեց, որ Ախալքալաքիի քաղաքապետի պաշտոնի համար կուսակցությունը առաջադրել է 57-ամյա Յուրիկ Ունանյանի թեկնածությունը: Ներկայացնելով թեկնածուին, Հենզել Մկոյանը նշեց, որ մասնագիտությամբ իրավաբան Յուրիկ Ունանյանն իր աշխատանքային գործունեության տարիներին եղել է քննիչ, դատախազի օգնական, իսկ 2004 թվականից Ախալքալաքի-Նինոծմինդայի շրջանային դատախազ: «Անձամբ ես լավ եմ ճանաչում Յուրիկին, մանկության ընկերներ ենք, ապրել ենք նույն թաղամասում: Օրինավոր ընտանիքի ղեկավար է, ունի երկու զավակ եւ չորս թոռնիկ, նրանց դաստիարակում է հայրենասիրության ոգով»,- հայտարարեց Հենզել Մկոյանն ու տեղացիներին կոչ արեց քվեարկել Յուրիկ Ունանյանի եւ մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավորության կուսակցությունից առաջադրված թեկնածուների օգտին:

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

Տեղի ընտրողների հետ հանդիպմանը Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը, ներկայացրեց անցած տարիների ընթացքում շրջանում իրականացված նախագծերը եւ խոսելով առաջիկա ծրագրերի մասին, նշեց, որ դրանց մարմնավորման համար անհրաժեշտ է, որ տեղական իշխանությունում ընտրվեն բանիմաց եւ իրավասու մարդիկ: Հենզել Մկոյանի խոսքով, հենց նման մարդկանց թեկնածությունն է առաջադրում «Վրացական երազանք» կուսակցությունը՝ հոկտեմբերի 21-ին անցկացվելիք ընտրություններում:

Ինչպես ասաց պատգամավորը, կուսակցությունը Նինոծմինդայի քաղաքապետի պաշտոնի համար առաջադրել է 43-ամյա Անիվարդ Մոսոյանի թեկնածությունը: «Անի Մոսոյանին շատերդ եք ճանաչում: Նա բարձրագույն կրթություն է ստացել Երեւանում եւ Թբիլիսիում, վրաց լեզվի ու հոգեբանության մասնագետ է»,- նշեց պատգամավորը եւ հավելեց, որ նա երկար տարիներ դասավանդել է վրաց լեզու, եղել դպրոցի տնօրեն, երկար տարիներ գլխավորել է շրջանային ռեսուրսկենտրոնը, ընտրվել է սակրեբուլոյի պատգամավոր: «Հայերենի, վրացերենի եւ ռուսերենի իմացությունը Անի Մոսոյանին հնարավորություն է տալիս իր աշխատանքը կազմակերպել բարձր մակարդակով եւ վայելել գործընկերների սերն ու համակրանքը»,- ասաց Հենզել Մկոյանն ու կոչ արեց առաջիկա ընտրություններում քվեարկել հօգուտ Անի Մոսոյանի ու «Վրացական երազանքից» առաջադրված սակրեբուլոյի պատգամավորության մյուս թեկնածուների:

Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում թեկնածուներին ներկայացնելու արարողությանը մասնակցում էր նաեւ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Կոբա Կոբալաձեն:

Լուսանկարը՝ Բորիս Արզումանյանի

ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ՎԵՐԱՄՇԱԿԵԼ ԵՎ ԶԱՐԳԱՑՆԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ 22 ԾՐԱԳԻՐ

«Վրացական երազանք», «Ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունից Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու Կախի Կալաձեն մտադիր է վերամշակել եւ զարգացնել սոցիալապես անպաշտպան, սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց, բազմազավակ ընտանիքների, ծերերի եւ նորածինների օգնությանն ուղղված սոցիալական 22 ծրագրեր:

- Բնականաբար, կշարունակվի կարիքավորների նյութական օգնության ցուցադրումը: Առանձնակի ուշադրություն կհատկացվի անվճար ճաշարանների ցանցի զարգացմանը, ճաշատեսակների եւ սպասարկման մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով, վարչությունները կստանան շուրջ 30 միլիոն լարի,- սեպտեմբերի 25-ին, անցկացնելով իր սոցիալական նախընտրական ծրագրի շնորհանդեսը, հայտարարեց Կախի Կալաձեն:



ԳԵՐՄԱՆԻԱ

ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սեպտեմբերի 25-ին Գերմանիայում անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքներով, Անգելա Մերկելի Քրիստոնեա-դեմոկրատական միություն-Քրիստոնեա-սոցիալական միություն պահպանողական դաշինքը կգբաղեցնի Գերմանիայի խորհրդարանի՝ Բունդեսթագի 709 տեղերից 246-ը:

Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը կստանա 153 մանդատ, ինչը 40-ով պակաս է 2013 թվականին կայացած նախորդ ընտրությունների ցուցանիշից: «Այլընտրանք Գերմանիայի համար» կազմակերպությունը, որն ավելի վաղ ներկայացված չի եղել խորհրդարանում, կգբաղեցնի 94 տեղ: Ազատ դեմոկրատական կուսակցությանը բաժին կհասնի 80 տեղ, «Կանաչներին»՝ 67, Ձախ կուսակցությանը՝ 69 տեղ:

Ընտրական հանձնաժողովի տվյալներով, ընտրություններին մասնակցությունը կազմել է 76,2 տոկոս, ինչը 4,7 տոկոսով բարձր է, քան 2013 թվականին:

ԻՐԱՔ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՔՐԴՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ

Իրաքյան Քրդստանում անցկացված հանրաքվեի մասնակիցների ավելի քան 93 տոկոսը պաշտպանել է տարածաշրջանի անկախությունը:

Ըստ վերջին տվյալների՝ հանրահարցմանը քվեարկել է շուրջ 3,3 մլն մարդ, մասնակցությունը կազմել է 72,16 տոկոս:

Թեպետ Բաղդադը Իրաքյան Քրդստանի իշխանությունների հետ մտադիր չէ քննարկել տարածաշրջանի անկախության հանրաքվեի արդյունքները: Այդ մասին հայտարարել է Իրաքի վարչապետ Հեյդար ալ Աբադին սեպտեմբերի 26-ին, երբ հայտնի դարձան հանրահարցման առաջին արդյունքները:

- Մենք պատրաստ չենք բանավիճել կամ երկխոսության մեջ մտնել հանրաքվեի արդյունքների շուրջ, քանի որ այն սահմանադրական չէ,- հայտարարեց նա:

ԱՄՆ Պետդեպարտամենտը «խորը հիասթափություն» է հայտնել Իրաքյան Քրդստանում անկախության հանրաքվեի անցկացման կապակցությամբ, որը, Վաշինգտոնի կարծիքով, կարող է անկայունության հանգեցնել այդ տարածաշրջանում:

ՈՒԿՐԱԻՆԱ

ՄԻՋԱԴԵՊԸ ՈՐԱԿՎԵԼ Է ՈՐՊԵՍ ԴԻՎԵՐՍԻԱ

Սեպտեմբերի 26-ին, Ուկրաինայի արտակարգ իրավիճակների պետական ծառայության ստորաբաժանումներում, տեղեկություն է ստացվել պաշտպանության նախարարության ռազմական պահեստներում ռազմամթերքի պայթյունների մասին, պահեստներ, որոնք գտնվում են Վիննիցայի մարզի Կալինովկա ավանի մերձակայքում: Ձինանոցում, որի մակերեսը շուրջ 60 հեկտար է, պահվում էր 188 հազար տոննա ռազմամթերք: Փրկարարները վտանգավոր գոտուց տարհանել են ավելի քան 30 հազար մարդու:

Ուկրաինայի զինվորական դատախազությունը Վիննիցայի մարզի Կալինովկա բնակավայրի մերձակա զինամթերքի պահեստում հրդեհն ու պայթյունները որակել է որպես դիվերսիա:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ԳԵՐՄԱՆԻԱ

ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻՆ

Սեպտեմբերի 27-ին, Բեռլինում Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ: Սա Անգելա Մերկելի առաջին հանդիպումն էր, սեպտեմբերի 25-ին Բունդեսթագում կատարած ընտրություններից հետո:

Հանդիպմանը հատուկ ուշադրություն հատկացվեց Վրաստանի եւ Գերմանիայի միջեւ քաղաքական եւ տնտեսական ոլորտներում համագործակցության դինամիկային: Վարչապետը Կանցլերին իրազեկեց Վրաստանում անցկացվող բարեփոխումների եւ երկրում առկա տնտեսական վիճակի մասին: Գիորգի Կվիրիկաշվիլու հավաստմամբ, Վրաստանում ստեղծված են բոլոր պայմանները օտարերկրացիների ներդրումների համար, ինչն իր հաստատումն է գտնում միջազգային հետազոտական ինստիտուտների կողմից կազմած վարկանիշներում: Ինչպես նշեց Վրաստանի վարչապետը, երկրում անցկացված բարեփոխումները, Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագիրը, ազատ առեւտրի մասին պայմանագիրը եւ Վրաստանի քաղաքացիների համար այցեգրային կարգի դյուրացումը, ինչպես նաեւ քաղաքական իրավիճակի կայունությունն ու ժողովրդավարությունը համապատասխանում են բոլոր այն պայմաններին, որոնք անհրաժեշտ են, որպեսզի գերմանացի գործարարներն առավել ակտիվորեն մուտք գործեն Վրաստան:

Երկու երկրների ղեկավարները քննարկեցին նաեւ գլոբալ անվտանգության հետ կապված հարցեր եւ այդ տեսանկյունից տարածաշրջանում Վրաստանի դերի թեման:

Հանդիպմանը Գիորգի Կվիրիկաշվիլին եւ Անգելա Մերկելը քննարկեցին Վրաստանի կենտրոնական իշխանության իրավասությունից դուրս գտնվող Աբխազիայում եւ Ցխինվալիի տարածաշրջանում ստեղծված իրավիճակը:



ՎՐԱՍՏԱՆԸ՝ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Նյու-Յորքում ՄԱԿ-ի կենտրոնակայանում, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու մասնակցությամբ, տեղի ունեցավ միջոցառում, որտեղ Վրաստանին փոխանցվեց Փարիզում սահմանված նորարարական ֆինանսավորման մշտական քարտուղարության նախագահությունը:

Իր խոսքում, Վրաստանի վարչապետը վստահություն հայտնեց, որ նորարարական ֆինանսավորան մշտական քարտուղարությունում Վրաստանի նախագահությունը թույլ կտա նշանակալի ավանդ ներդնել նորարարական ֆինանսավորման ուղղությամբ գլոբալ գործողության մեջ:

Նորարարական ֆինանսավորման մշտական քարտուղարությունում նախագահի պաշտոնում Վրաստանը կներկայացնի համերաշխության հիմնադրամի հիմնադիրներից, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, պրոֆեսոր Մարիամ Ջաշին:

ԴՊՐՈՑՆԵՐԸ ԿԱՊԱՀՈՎՎԵՆ ՎԱՌԵԼԱՓԱՅՏՈՎ

Վրաստանի անտառի ազգային գործակալությունը, ընթացիկ տարվա համար, երկրի տարածքում գործող շուրջ 1500 պետական դպրոցներին ապահովելու է վառելափայտով:

Ինչպես նշված է գործակալության պաշտոնական կայքէջում, վառելափայտի կազմակերպված բաշխումը ոչ միայն կնպաստի երկրի դպրոցներում ուսումնական գործընթացի հաջող իրականացմանը, այլեւ՝ արդյունավետ մեխանիզմ կստեղծի երկրի անտառային ռեսուրսների օգտագործման ուղղությամբ:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ
(29 սեպտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.455	2.510
ԵՎՐՈ	2.860	2.981
ՌՈՒԲԼԻ	0.040	0.046
ԴՐԱՄ	0.0039	0.0056

Սեպտեմբերի 22-ի համեմատ, դոլարի կուրսը նվազել է 0,005 լարիով:

ԻՆՏԵԳՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՔԱՂԱՔԱՑԻ, ԱՆԿԱԽ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ, ՊԵՏՔ Է ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԵՐԿՐԻ ԿՅԱՆՔ ՆԵՐԳՐԱՎՎԵԼՈՒ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆԱ»

Սեպտեմբերի 26-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին մասնակցեց ազգային փոքրամասնության ներկայացուցիչ երիտասարդների համար ծրագրված ստաժավորման նախագծի առաջին փուլի հանրագումարային միջոցառմանը եւ դրա մասնակիցներին հանձնեց հավաստագրեր:

Հանդես գալով միջոցառմանը, պետնախարարը հայտարարեց, որ Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի, անկախ ազգային պատկանելությունից, պետք է բոլոր ոլորտներում երկրի կյանք ներգրավվելու հավասար հնարավորություններ ունենա:

«1+4» հանրակրթական ծրագրին մասնակից երիտասարդների համար ստաժավորման նախագիծը գործարկվեց 2017 թվականին, պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլու նախագահությամբ, եւ նպատակ ուներ նպաստել ազգային փոքրամասնության ներկայացուցիչ երիտասարդների աշխատանքով ապահովմանը, նրանց ակտիվ եւ լիարժեք ներգրավմանը երկրի հասարակական եւ քաղաքական կյանք:

Հատուկ հանձնաժողովի կողմից ընտրված 65 թեկնածուները հաջողությամբ ստաժավորում անցան հանրային տարբեր ոլորտներում: Նախագծի մասնակիցներից Լոլիտա Հովհաննիսյանը, աշխատակցի կարգավիճակով, աշխատանքը կշարունակի ժողովրդական պաշտպանի աշխատակազմի տարածաշրջանային դեպարտամենտի Սամցխե-Ջավախեթիի գրասենյակում:

Ներկա փուլում, ընթացքի մեջ է ազգային փոքրամասնության ներկայացուցիչ երիտասարդների համար պետական ստաժավորման երկրորդ փուլի նախապատրաստումը: Ստաժավորմանը մասնակից գերատեսչությունների շրջանակն ընդլայնվել է:

Նախագիծն իրականացվում է Վրաստանում ՄԱԿ ասոցիացիայի եւ ԱՄՆ զարգացման գործակալության աջակցությամբ:

- Դուք այն երիտասարդներն եք, ովքեր առաջինը մասնակցեցիք մեր կողմից իրականացված ստաժավորման նախագծին: Ցանկանում եմ, շնորհակալություն հայտնել, որ դուք ձեր նպատակամղվածությամբ եւ համառությամբ թույլ տվեցիք նախագիծը հաջողակ ԴԱՐՁՆԵԼ, եւ այն անվերապահորեն շարունակել: Այս նախագիծը ծառայում է քաղաքականությանն ու խնդիրներին, որոնց համակարգումն իրականացնում է մեր աշխատակազմը՝ դա քաղաքացիական իրավահավասարությունն է եւ ինտեգրման քաղաքականությունը, ինչը նախ ներառում է այն, որ Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի, անկախ ազգային պատկանելությունից, պետք է բոլոր ոլորտներում երկրի կյանք ներգրավվելու հավասար հնարավորություններ ունենա,- ասաց Քեթեւան Ցիխելաշվիլին:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՄԱՑԱՆՑՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը, հատուկ ուղերձով դիմել է Վրաստանում գրանցված հարկատուներին ու ընկերություններին:

Ինչպես տեղեկացրին եկամուտների ծառայությունում, գերատեսչությունն արձագանքել է վրացական ընկերություններին եւ անհատական ձեռներեցներին ուղղված Վրաստանի արտաքին գործերի նախարարության դիմումին՝ կապված օտարերկրյա ընկերությունների կողմից խարդախության սխեմաների օգտագործման հետ:

Գերատեսչությունն ընկերություններին եւ ձեռներեցներին խորհուրդ է տալիս՝ համացանցային գնումների ժամանակ ցուցաբերել առավելագույն զգուշություն եւ լավ ստուգել հնարավոր գործընկերներին, ինչպես իրավական կարգավիճակի, այնպես էլ՝ հուսալիության տեսանկյունից:

- Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը դիմում է Վրաստանում գրանցված հարկատուներին եւ ընկերություններին՝ համացանցի միջոցով Ասիայի, Աֆրիկայի կամ Արեւելյան Եվրոպայի տարբեր երկրներից ապրանքներ գնելիս, առանց ապրանքը մատակարարող սուբյեկտի գործնական հանգամանքների համապատասխան ստուգման, գործարք չկնքել եւ խուսափել դրամական փոխանցումների կատարումից:

Վերոնշյալ սուբյեկտները, հաճախ կեղծ ընկերություններ են, ունեն լավ ձեւակերպված կայքէջեր կամ օգտագործում են հայտնի ընկերությունների անվանումները: Նրանք գնորդներին ապրանքն առաջարկում են զգալիորեն էժան գներով, փոխարենը՝ պահանջում են նախօրոք լրիվ գումարի կամ դրա որոշակի մասի փոխանցում, այդ թվում՝ կեղծ փաստաթղթերի վրա հիմնված:

Հետեւաբար, խնդրում ենք համացանցային գնումների ժամանակ ցուցաբերել առավելագույն զգուշություն եւ լավ ստուգել հնարավոր գործընկերների ինչպես իրավական կարգավիճակի, այնպես էլ՝ հուսալիության տեսանկյունից: Միաժամանակ, նշանակալի է՝ հաշիվ-հաշվարկումն իրականացվի միջազգային պրակտիկայում հաստատված եւ փորձարկված նորմերին համապատասխան,- ասված է եկամուտների ծառայության կողմից տարածած հայտարարության մեջ:

ԲԻԶՆԵՍ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՎԱՍՏԱԳԻՐԸ՝ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբերի 25-ին, Վրաստանի բիզնես ակադեմիայում ուսումնական տարվա մեկնարկին նվիրված արարողության շրջանակներում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությանը՝ որպես «Ապագա բիզնեսմեններ» ինտելեկտուալ բիզնեսի օլիմպիադայի 2017 թվականի լավագույն գործընկերոջ, հանձնվեց Վրաստանի բիզնես ակադեմիայի հավաստագիրը: Օլիմպիադային մասնակից հաղթող թիմի անդամները գտնվում էին ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային անցումակետերում, սպասարկման կենտրոններում եւ ձեւակերպման տնտեսական գոտիներում: Աշակերտները, որպես ապագա հարկատուներ, հատուկ նրանց համար անցկացված շնորհանդեսներին եւ էքսկուրսիաներին, հետաքրքիր ու սպառիչ տեղեկություն ստացան մաքսային անցումակետերում եւ սպասարկման կենտրոններում մատուցվող ծառայությունների եւ ընթացակարգերի մասին: Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը պատրաստակամություն է հայտնել միշտ, որպես գործընկեր, մասնակցել նման նախագծերի իրականացմանը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բարեկամությունն ունի դարերի պատմություն: Իրակլի Կոբախիձեն վստահեցրեց, որ Վրաստանի խորհրդարանական բոլոր ուժերն ունեն միատեսակ դիրքորոշում այն մասին, որ Հայաստանի հետ հարաբերությունները պետք է լինեն եղբայրական, եւ քայլեր ձեռնարկվեն դրանք առավել ամրացնելու ուղղությամբ: Վրաստանի խորհրդարանի ղեկավարը հայ գործընկերներին մանրամասն ներկայացրեց երկրում ընթացող բարեփոխումների հիմնական ուղղությունները:

Հայաստանի Ազգային ժողովի նախագահն իր խոսքում, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, նշեց, որ Հայաստանի խորհրդարանի պատվիրակության պաշտոնական այցը Վրաստան լուրջ խթան կհանդիսանա երկու երկրների միջպետական հարաբերությունների եւ, հատկապես, միջխորհրդարանական համագործակցության հետագա ամրապնդման համար:

Հանդիպմանը, որին վրացական կողմից մասնակցում էին Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Իլիա Նակաշիձեն, պատգամավորներ Հենզել Մկոյանը, Ռուսլան Պողոսյանը եւ Սամվել Մանուկյանը, քննարկվեցին տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական եւ այլ ոլորտներին առնչվող հարցեր:

ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպում ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հետ:

Հանդիպմանը շնորհակալություն հայտնելով Հայաստանին Վրաստանում տեղի ունեցած հրդեհների ժամանակ աջակցելու համար, Վրաստանի նախագահն ափսոսանք հայտնեց, որ նման աղետը չի շրջանցել Հայաստանը եւս:

Խոսելով վրաց-հայկական դիվանագիտական հարաբերությունների շուրջ, Վրաստանի նախագահը, մասնավորապես, նշեց, որ արդեն 25 տարի երկու երկրների հարաբերություններում առաջընթացն ակնհայտ է, եւ Վրաստանը մշտապես պատրաստ է Հայաստանի հետ քննարկել ցանկացած հարց եւ առավել զարգացնել երկու երկրների հարաբերությունները բոլոր ոլորտներում: Վրաստանի նախագահը գոհունակություն հայտնեց Հայաստանի ու Վրաստանի օրենսդիր մարմինների միջեւ առկա խորհրդարանական դիվանագիտական համագործակցության զարգացումից:

Իր հերթին, Արա Բաբլոյանը Վրաստանի նախագահին շնորհակալություն հայտնեց բարձր մակարդակով ընդունելության համար: Հանդիպման ընթացքում քննարկվեցին վրաց-հայկական համագործակցության տարբեր ոլորտներին առնչվող բազմաթիվ հարցեր: Արա Բաբլոյանը, Վրաստանի նախագահին ներկայացնելով հայ-վրացական խորհրդարանական աշխատանքների ուղղությունները, մասնավորապես, նշեց, որ Հայաստանի խորհրդարանում ձեւավորվել է Հայաստան-Վրաստան բարեկամական խումբ՝ Ազգային ժողովի փոխնախագահի գլխավորությամբ, որը պատրաստ է ակտիվ ու բազմակողմանի աշխատանքի:

Նույն օրը Հայաստանի ԱԺ պատվիրակությունը, խորհրդարանի նախագահ Արա Բաբլոյանի գլխավորությամբ, հանդիպում ունեցավ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

«ԻՆՏԵԳՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՈՒՂԻՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԼՐԱՑՆԵԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Հայաստանի ԱԺ նախագահ Արա Բաբլոյանի գլխավորած պատվիրակությունը, սեպտեմբերի 26-ին, հանդիպում ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ: Հանդիպմանը կողմերը, մասնավորապես, խոսեցին երկու երկրների տնտեսական փոխհարաբերությունների զարգացման շուրջ:

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին գոհունակությամբ խոսեց վրաց-հայկական կայուն զարգացող հարաբերությունների մասին, միաժամանակ նշելով, որ ներկայումս 400 միլիոն դոլար կազմող առեւտրաշրջանառության ծավալներն անհրաժեշտ է մեծացնել: Վրաստանի վարչապետն իր խոսքում ընդգծեց բարձր մակարդակի փոխայցելությունների կարեւորությունը: Գիորգի Կվիրիկաշվիլին, երկկողմ համագործակցության զարգացման համար, առավել կարեւոր ոլորտներից հատկապես

առանձնացրեց զբոսաշրջությունը, նշելով, որ հաշվի առնելով երկու երկրների հարուստ պատմամշակութային ժառանգությունը՝ անհրաժեշտ է պատրաստել համատեղ տուրիստական փաթեթներ: Վարչապետը միաժամանակ հավաստիացրեց, որ Վրաստանը բաց է բարեկամ Հայաստանի հետ քննարկելու համագործակցության զարգացման հնարավորությունները ցանկացած ոլորտում:

Իր խոսքում, Հայաստանի Ազգային ժողովի նախագահը նշեց. «Հայաստանն ու Վրաստանը միջազգային ինտեգրման տարբեր ուղիներ են ընտրել, սակայն դա չի կարող խոչընդոտ հանդիսանալ մեր երկրների փոխգործակցության զարգացման համար, այլ կարող է լրացնել ու դրական ազդեցություն ունենալ ոչ միայն տնտեսական հարաբերությունների հետագա խորացման, այլ նաեւ տարածաշրջանային համագործակցության առավել ընդլայնման համար»:

Արա Բաբլոյանը նշեց նաեւ, որ վերջին տարիներին Հայաստանի ու Վրաստանի միջեւ ձեւավորվել են տնտեսական գործընկերության հստակ ուղղություններ: Հայաստանի խորհրդարանի ղեկավարն ընդգծեց ապակենտրոնացված համագործակցության խորացման կարեւորությունը: Որպես երկրների տարածաշրջանների փոխգործակցության լավ օրինակ Արա Բաբլոյանը նշեց Աջարիայի եւ Լոռու մարզի միջեւ կապերը: Հաշվի առնելով այս ամենը, Հայաստանի խորհրդարանի ղեկավարը, այնուամենայնիվ, արձանագրեց, որ առեւտրատնտեսական ներուժն ամբողջությամբ չի օգտագործվում: Արա Բաբլոյանը հավաստիացրել է, որ խորհրդարանականները պատրաստ են հանդես գալ օրենսդրական անհրաժեշտ նախաձեռնություններով՝ կոնկրետ բնագավառների խնդիրները լուծելու համար:

«Արմենպրես» - «ՎՐԱՍՏԱՆ»

ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԳԾԵՑ, ՈՐ ՀՊԱՐՏ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՎ»

Եռօրյա պաշտոնական այցի շրջանակներում ՀՀ ազգային ժողովի պատվիրակությունը, նախագահ Արա Բաբլոյանի գլխավորությամբ, Թբիլիսիի «Հովհ.Թումանյանի տուն» կենտրոնում հանդիպեց հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Ողջունելով հյուրերին, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը խոսեց հայ-վրացական դարավոր բարեկամության մասին, որի հիմնաքարը ազգային եւ հոգեւոր մեծ արժեքներով ստեղծած վիրահայ համայնքն է:

Այնուհետեւ, Հայաստանի Ազգային ժողովի նախագահն ամփոփ ներկայացրեց եռօրյա պաշտոնական այցի ընթացքում քննարկված հարցերն ու ձեռքբերված համաձայնությունները, որոնք վերաբերել են երկու հարեւան ժողովուրդներին հետաքրքրող ռազմավարական,տնտեսական եւ օրենսդրական հարթակներին.

- Հարգելի բարեկամներ, սիրելի հայրենակիցներ, նախ շատ հաճելի է ձեզ հետ հանդիպել եւ առավելեւս, երբ այդ հանդիպումը կայանում է Թումանյանի տանը, մեր տանը: Հատկանշական է, որ, չնայած մեծ դժվարությունների, այս տունը հետ բերվեց շնորհիվ արժանի հայորդիների ու հայկական կազմակերպությունների, որոնք միավորվեցին մեկ գաղափարի շուրջ եւ այսօր ահա կարողացանք ունենալ այս օջախը, որը ոչ միայն պարզապես կառույց է, այլ Վրաստանում, մասնավորապես Թբիլիսիում հայ ժողովրդի ներդրումների սիմվոլը: Երկու օր է, ինչ բարձր մակարդակով հանդիպումներ ենք անցկացնում Վրաստանի խորհրդարանի նախագահի, երկրի նախագահի, վարչապետի, ինչպես նաեւ արտգործնախարարի եւ Կաթողիկոս Իլիա Երկրորդի հետ: Պետք է ասեմ, որ շատ ջերմ հանդիպումներ էին: Յուրաքանչյուր հանդիպման ընթացքում զգացել ենք այն ջերմ վերաբերմունքը, որն ունի Վրաստանի ղեկավարությունը Հայաստանի եւ Վրաստանի հայ համայնքի հանդեպ: Անընդհատ շեշտում էին, թե հպարտ են, որ հայերի հետ միասին կարողացել են ստեղծել այնպիսի արժեքներ, որոնք ցայսօր պահպանվել են եւ հանդիսանում են Վրաստանի հարստությունը: Այո՛, սա մի կողմից հայոց հարստությունն է, մյուս կողմից՝ Վրաստանի հարստությունը, որովհետեւ Վրաստանը հպարտանում է նաեւ նրանով, որ այստեղ 19 տարի ապրել ու արարել է հանճարեղ Հովհաննես Թումանյանը: Երբ քայլում էինք հին Թիֆլիսի փողոցներով, ամեն տեղ տեսնում էինք հայի հետքը, եւ վրացիները դա խոստովանում էին: Մենք էլ մեր հերթին էինք հպարտանում, որ սկսած սուրբ Շուշանիկից հայերը ազնիվ են եղել իրենց հարաբերություններում, նվիրված են եղել ու չեն դավաճանել: Սա է կարեւորը: Պատմությունն ապացուցել է, որ տարբեր ազգեր ու պետություններ ստեղծվել ու ապա վերացել են, մինչդեռ մենք՝ երկու փոքր պետությունները, եղել ենք ու շարունակում ենք մնալ, ուրեմն եւ պարտավոր ենք ապահովել մեր սերունդների անվտանգ ապագան: Մենք ռազմավարական բարեկամ ունենք, ով Վրաստանի հետ խնդիր ունի, այդուհանդերձ հստակ առաջադրեցինք եւ երկուստեք ընդունեցինք նաեւ այն, որ մեր բարեկամությունը որեւիցե մեկը չի կարող պղծել: Մենք պետք է չխառնենք մեր հարաբերությունները որեւէ երրորդ կողմի հետ: Լինելով ԵԱՏՄ անդամ, մենք երբեւէ չենք նվազեցրել մեր տնտեսական հարաբերությունները Վրաստանի հետ: Նոյեմբերին պետք է համաձայնագիր ստորագրենք Եվրամիության հետ, համագործակցում ենք ԱՄՆ-ի, Չինաստանի, Իրանի եւ տարբեր երկրների հետ: Այցի ժամանակ շատ կարեւոր հարցեր քննարկեցինք: Վրաստանի վարչապետի հետ զրույցը իսկապես ոգեւորիչ էր: Շատ կարեւոր է, որ ոչ թե մեկս մյուսին, այլ երրորդ կողմին կարողանանք ապացուցել, որ լավ բարեկամներ ենք եւ եղբայրական մակարդակի հարաբերություններ ունենք, որոնք դարերով ու հարյուրամյակներով են ստեղծվել: Եթե ուրիշներն ի ցույց են դնում իրենց մշակույթը զարմացնելու համար, ապա Հայաստանը եւ Վրաստանը այդ ամենը դարերի ընթացքում են կերտել ու ստեղծել եւ զարմացնելու կարիք չունեն:

Եվ, իհարկե, ամենամեծ բավականությունը, զգացումներն ու ապրումներն ունեցանք Վրաց Պատրիարք Իլիա Երկրորդի հետ հանդիպման ժամանակ: Բացառիկ բարեկամական էր հանդիպումը. նրա ուղեցույցով այցելեցինք իր ձմեռային այգին, ապա հյուրասրահ մտանք, ուր, ի դեպ, պահվում էր ՀՀ նախագահի ընծայած գորգը, եւ շատ հաճելի էր, որ այն հենց այդտեղ էր, Վեհափառի գլխավոր ընդունարանում: Իլիա Երկրորդը շատ ջերմ խոսքեր հղեց մեզ, մեր երկրի նախագահին ու Կաթողիկոսին, փոխանցելով իր օրհնությունն ու բարեմաղթանքը: Խոսելով հայ ժողովրդի մասին, Վեհափառն ընդգծեց, որ ահա սա է մեր իրական բարեկամ ժողովուրդը, նրանք են մեր եղբայրներն ու քույրերը, ում հետ հազարավոր տարիների ընթացքում բազմաթիվ դժվար օրեր ենք անցել, բայց կարողացել ենք հաղթահարել եւ պարտավոր ենք առաջ գնալ ու զարգացնել այդ ամենը:

Այո, մենք պարտավոր ենք միասին առաջ գնալ: Վրաց ժողովրդի հետ դարեր ենք անցել եւ շնորհակալ ենք, որ հնարավորություն ունենք Վրաստանում մեծ հայ համայնք ունենալ, միաժամանակ հպարտ ենք, որ լինելով Վրաստանի քաղաքացիներ, ազնիվ ծառայում ենք եւ շենացնում այս երկիրը: Վրացիներին էլ շնորհակալ ենք, որ դուք կաք Վրաստանում:

Հանդիպումն ընթացավ հարց ու պատասխանի ձեւաչափով: Բարձրացված հարցերին պատասխանեցին պատվիրակության գրեթե բոլոր անդամները: Ավարտին՝ Ազգային ժողովի նախագահը գիրք նվիրեց կենտրոնի գրադարանին: